



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՊՐԻԼԵԱՆ ՀԱՄԱՔ ՊԸՐՊԵՆՔԻ ՄԷՋ

Երեքշաբթի, Ապրիլ 18-ին, Պըրպենքի քաղաքապետարանին առջև Ապրիլեան Եղեռնի Ոգեկոչման ձեռնարկ մը տեղի ունեցաւ, կազմակերպութեամբ Ապրիլեան Ոգեկոչման Յանձնախումբին: Զայլարշաւով սկսած ձեռնարկին մասնակցութիւն բերին շրջանի Հայ Դատի, Հ.Մ.Ը.Մ.ի, երիտասարդացի անդամներն ու հայ ժողովուրդը:

Պըրպենքի քաղաքապետարանի շէնքի դիմաց տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ պատշաճ յայտագիր, որուն ընթացքին քաղաքապետական խորհուրդը Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներուն յանձնեց Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող յուշագիր մը:

Արժ. Տ. Խորէն Ա. Զինյ. Հապէշեան, իբրեւ ներկայացուցիչը Թեմիս բարեխնամ Աղաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, ներկայ եղաւ ոգեկոչման ձեռնարկին եւ փոխանցեց իր օհնութիւնները:

GENOCIDE COMMEMORATION AT BURBANK CITY HALL

On Tuesday, April 18, a genocide commemoration event took place in front of the Burbank City Hall, organized by the ANC Burbank Genocide Remembrance Committee. Participating in the event, which was preceded by a march, were local ANC, H.M.E.M, and various youth group members.

During the event, which included a candle lighting ceremony, City Council members presented a proclamation recognizing the Armenian Genocide.

Archpriest Khoren Habeshian was in attendance to represent the Prelate and convey his blessings.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԳԱՐՄԻ ԺՈՂՈՎԻՆ

Չորեքշաբթի, Ապրիլ 19-ի երեկոյեան Առաջնորդ Սրբազան հայրը ներկայ եղաւ Հայաստան Համահակական Հիմնադրամի կողմէ կազմակերպուող առաջին ժողովին:

Առաջնորդ Սրբազան հօր կ'ընկերանային Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեանն ու Ազգային Վարչութեան կողմէ ներկայացուցիչը՝ Տիար Բեգլար Փիլաւճեան:

PRELATE ATTENDS ARMENIAN FUND BOARD MEETING

On the evening of Wednesday, April 19, the Prelate attended the first meeting of the newly ապադիստող board of Armenia Fund. Joining the Prelate were Rev. Vazken Atmajian, and Mr. Peklar Pilavjian, the Executive Council's new representative to Armenia Fund.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՍ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ուրբաթ, Ապրիլ 21-ի առաւօտեան ժամը 9-ին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 91-ամեակին նուիրուած ոգեկոչման ու յարգանքի յատուկ արարողութիւն մը, որ կազմակերպուած էր Հայ Դատի եւ քաղաքապետարանի կողմէ:

Արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ Գերպ. Տ. Սիւնն Շ. Վրդ. Ազնիկեան՝ իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան հօր:

GENOCIDE COMMEMORATION AT LOS ANGELES CITY HALL

On Friday, April 21, at 9:00 a.m., an event commemorating the 91st anniversary of the Armenian Genocide took place at Los Angeles City Hall.

The event was organized by the Armenian National Committee and L.A. City Council. Very Rev. Fr. Muron Aznikian represented the Prelate.

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՄՈՄՎԱՎՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, Ապրիլ 21-ի առաւօտեան ժամը 9-ին, հոգեհանգստեան պաշտօն, ծառատնկման եւ մոմավառութեան արարողութիւն տեղի ունեցաւ Շամլեան ազգային վարժարանի շրջափակին մէջ:

Աշակերտներուն ձեռամբ պատրաստուած նահատակաց յուշարձանն ու ձեռային աշխատանքները զետեղուած էին վարժարանի սրահին մէջ: Արարողութեան մասնակցեցան Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանն ու Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները:

Նոյն օրը, Ֆերահեան Ազգ. Վարժարանի աշակերտները եւս Ապրիլեան Ոգեկոչման հաւաք մը ունեցան վարժարանի Աւետիսեան սրահին մէջ:

Իսկ Ապրիլ 21-ի երեկոյեան, Ալեք Փիլիպոս Ազգային վարժարանը իւրայատուկ եւ յիշատակութեան արժանի աշակերտական հանդիսութեամբ մը նշեց Ցեղասպանութեան 91-ամեակը:

Ձեռնարկը իւրայատուկ էր այն իմաստով, որ իր մէջ կը խտացներ մեր կորուստին յիշատակն ու մեր ժողովուրդի վերականգնումին հպարտանքը:

Արդարեւ, մեր նահատակներուն յիշատակին նուիրուած յուզական բաժինին կողքին, պատրաստուած յայտագիրը ուներ նաեւ հայութեան վերականգնումը խորհրդանշող բաժին մը, որ կ'արտայայտուէր վարժարանին 36-ամեակին նշումով:

Հանդիսութիւնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըս Մասնաճիւղի սկաուտներուն կողմէ դրօշակի արարողութեամբ: Տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն: Ս. Կարապետ եկեղեցւոյ Յոգեւոր Հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւնյ. Վասիլեան, ներկայ եղաւ հանդիսութեան, կատարեց հոգեհանգստեան արարողութիւնը եւ փոխանցեց իր հոգեւոր խօսքը: Հոգեհանգստեան արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցւոյ սարկաւազները:

Աշակերտական խորհուրդի ներկայացուցիչը արտասանեց աշակերտութեան խօսքը, դեռատի ու պատանի աշակերտներ երգով, պարով ու նուագով հրամցուցին գեղարուեստական ծաղկեփունջ մը, որուն եզրափակումը կատարեց վարժարանին տնօրէնը՝ Դոկտ. Վիգէն Եագուպեան, հանդէս գալով ոգեկոչումի իւրայատուկ պատգամով մը:

Մոնթեպելլոյի Մեսրոպեան Ազգ. վարժարանի աշակերտները եւս Ուրբաթ, Ապրիլ 21-ի երեկոյեան, ոգեկոչման յուշահանդէս մը ունեցան. իսկ Հինգշաբթի եւ Ուրբաթ, Ապրիլ 20-ին եւ 21-ի առաւօտեան, նահատակներու հանդէպ իրենց յարգանքը ցուցաբերեցին ծաղիկներ գետեղելով վարժարանի համալիրին մէջ գտնուող Արարատ լէրը խորհրդանշող մարմարեայ յուշաքարին առջեւ:

OUR STUDENTS COMMEMORATE THE ARMENIAN GENOCIDE

On Friday, April 21, at 9:00 a.m., requiem services, tree planting, and a candle lighting ceremony took place in the courtyard of Chamlian Armenian School. A genocide memorial constructed by the students and other various works were displayed in the school assembly hall. Very Rev. Fr. Barthev Gulumian and pastors of St. Mary's Church of Glendale participated in the ceremony.

On Friday, April 21, Ferrahian school students held an assembly at the school's "Avedissian" Hall to commemorate the Armenian Genocide.

That same evening, the students of A. Pilibos Armenian School will commemorate the Armenian Genocide with a special and memorable program. Alongside a very touching ceremony in remembrance of our martyrs, took place a program celebrating our people's survival.

The program will begin with a flag ceremony by H.M.E.M Los Angeles chapter scouts, followed by a candle lighting ceremony and requiem service. Rev. Vicken Vassilian of St. Garabed Church will conduct the requiem service and deliver his

message. Remarks will also be made by a student council representative on behalf of the student body followed by an artistic program by the students. The program will end with closing remarks by Dr. Viken Yacoubian, the school principal.

The Armenian Mesrobian School students will also have an event on Friday evening commemorating the Armenian Genocide. In addition, on the morning of Thursday, April 20, and Friday, April 21, the students placed flowers on the campus's marble monument representing Mount Ararat, as respect to our martyrs.

**ՇԱՄԼԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻՐ**

Շաբաթ, 22 Ապրիլի առաւօտեան ժամը 8:30էն սկսեալ տեղի պիտի ունենայ Վահան եւ Անուշ Շամլեան Ազգ. վարժարանի աշակերտական 22-րդ քայլարշաւը, վարժարանի շարքափակէն մինչեւ Կլէնտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցի:

Տարիներու աւանդութեան համաձայն, այս քայլարշաւը տեղի կ'ունենայ հովանաւորութեամբ շրջանի քոյր միութեաններուն եւ կազմակերպութիւններուն:

CHAMLIAN SCHOOL STUDENTS ANNUAL MARCH

On Saturday, April 22, at 8:30 a.m., Chamlian school students will hold their 22nd annual march. The march will depart form the school courtyard and end at St. Mary's Church. Following tradition, this year also local sister organizations will participate and help in organizing the march.

**ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ
ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ**

Լաս Վեկասի մեր գաղութը եւս Կիրակի, 23 Ապրիլին պիտի ոգեկոչէ Զայոց Ցեղասպանութեան 91-ամեակը: Թեմիս Կոստական Ժողովի ատենապետ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Քինյ. Վասիլեան ներկայ պիտի ըլլայ ոգեկոչման ձեռնարկին, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան հօր, եւ պիտի կատարէ հոգեհանգստեան արարողութիւն, պիտի մասնակցի ձեռնարկին ու պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան հօր պատգամը:

**LAS VEGAS COMMUNITY TO COMMEMORATE
THE ARMENIAN GENOCIDE**

On Sunday, April 23, the Las Vegas community will commemorate the Armenian Genocide. Religious Council Chair Archpriest Vicken Vassilian will be represent the Prelate and deliver his message. Archpriest Vassilian will also conduct requiem services and participate in the program, representing His Eminence the Prelate.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ

Երկուշաբթի, Ապրիլ 24-ի առաւօտեան Առաջնորդ Սրբազանը, հոգեւոր հայրերն ու Ազգ. Վարչութեան անդամները պիտի բարձրանան Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանը եւ ծաղկեպսակներ գետեղելով՝ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարեն յարգելու համար յիշատակը մեր նահատակներուն:

Աւելի ուշ, Կեսօրուան մօտ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստ, ի յիշատակ մեր բիրաւոր նահատակներուն: Ներկայ պիտի ըլլան հայկական երեք յարանուանութեանց հոգեւոր առաջնորդները: Ս. Պատարագէն ետք, եկեղեցւոյ Նահատակաց Խաչքարին առջեւ տեղի պիտի ունենայ յուշահանդէս:

Ս. Պատարագ պիտի մատուցէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Յիշատակի խօսք պիտի արտասանեն Առաջնորդ Սրբազան Հայրը, Հայ Կաթողիկէ Համայնքի Ժողովրդապետ՝ Տ. Անտոն Վրդ. Սարոյեան եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ միութեան հովիւ՝ Վերապետուելի Յովսէփ Մաթոսեան:

Ներկայ պիտի ըլլան պաշտօնական անձնաւորութիւններ:

REQUIEM SERVICES AT THE MONTEBELLO MONUMENT

In the morning of Monday, April 24, the Prelate, clergy members, and Executive Council members will gather at the Montebello monument to place flowers at the memorial and to hold requiem services in remembrance of our martyrs.

Later on, at 11 a.m., Holy Mass will be conducted at St. Mary's church of Glendale. Mass will be conducted by Very Rev. Fr. Barthev Gulumian, and remarks will be made by the Prelate, Very Rev. Fr. Andon Saryan of the Armenian Catholic Church, and Rev. Joe Matossian of the Armenian Evangelical Church. Following Mass, requiem service will take place in the church courtyard, in front of the khachkar dedicated to our martyrs.